

# ՓԸՂՏԱՃԸԿԸՆՔ

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Գերմանիա կատարած Հայրապետական այցելության ընթացքում, Գերմանիո Հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին եպիսկոպոս Բեքչյանի ներկայացմամբ, բարձրորեն գնահատեց թեմի վարչական, կազմակերպչական և զանազան այլ խնդիրներում իրենց անմնացորդ մասնակցությունը բերած անհատների գործունեությունը.*

*Գարեգին Ա Վեհափառի հայրապետական տնօրինմամբ* ***«Ս. Ներսես Շնորհալի»*** *շքանշանով պարգևատրվել են դոկտ. Սարգիս Քեհյայանը, տիկ. Սոնյա Այսբերին, տիար Մուրադ Արկյուզը, տիար Հերման Օդաբաշյանը, իսկ* ***«Ս. Սահակ-Ս. Մեսրոպ»*** *շքանշանին է արժանացել օրիորդ Մինու Նիքբայը:*

*Գարեգին սրբազանի ներկայացմամբ տիարք Մերուժան սարկավագ Սեդեֆյանը, Պետրոս սարկավագ Ատրյանը, Արման սարկավագ Փիլիպոսյանը, Սիմոն սարկավագ Հալգաջը, Կարպիս սարկավագ Գարագավաֆը, Մինաս Բոյաջյանը, Սերովբե Օդաբաշյանը, Գրիգոր Սալլամերը, Կարապետ Գոտաքը, դոկտ. Նուրի Յազջը, Վահե Գույումջյանը և տիկնայք Անգինե Բոհարյանը, Արաքսի Գունտուրաջյանը, Երանուհի Հարթմանը, Հայդմարի Գալըբջյանը արժանացան* ***«Հայրապետական Օրհնության և Գնահատանքի Գրի»:***